ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝

Գ. Նադիրյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

Ա Պապյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված (27.06.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 26.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել էր «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) (հետայսու նաև՝ Կոնսորցիում):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.06.2019թ. թիվ 10 արձանագրությամբ որոշել է Կոնսորցիումի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 և 01.08.2018թ. կնքված N012-AC-18/07 ծածկագրերով պայմանագրերով մատակարարված ապրանքները հանդիսանում են շինարարական նյութեր, իսկ ընթացակարգի հրավերով 6-րդ չափաբաժնի համար որպես նմանատիպ են սահմանվել տնտեսական ապրանքների մատակարարման պայմանագրերը և միևնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը նշված ապրանքատեսակները չեն դասվում համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության նույն խմբում: Վերոնշյալ հիմնավորմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է Կոնսորցիումի կողմից ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 ծածկագրով պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը 14.06.2019թ. ժամը՝ 14:00-ին կայացած նիստի թիվ 11 արձանագրության 1.2 կետի 2-րդ պարբերությամբ որոշել է՝ «Առկա

անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չներկայացվեց: Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվեց սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեց:»

1.3 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել հայտը:

1.4 կետով հանձնաժողովը որոշել է՝ Կոնսորցիումի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.5 կետով հանձնաժողովը որոշել է Կոնսորցիումի հայտի մերժման արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Օբորոն Տեքստիլ» ՍՊ ընկերությանը:

1.6 կետով հանձնաժողովը որոշել է՝ հրապարակել նիստի արդյունքները և «Մանգուգ», «Օբորոն Տեքստիլ» եւ «Վագիմպորտ» ՍՊ ընկերություններին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ի թիվս այլի՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցելով 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել և գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է անհամապատասխանությունը շտկած փաստաթղթերը:

11.06.2019թ. նիստը մեկ աշխատանքային օրով կասեցված լինելու պարագայում Ընկերությունը 12.06.2019թ. ներկայացրել է շտկված փաստաթղթերը: Հանձնաժողովը 14.06.2019թ. արձանագրության 1.2 կետով որոշել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել անհամապատասխանությունը շտկված փաստաթղթերը: Հանձնաժողովի որոշման ուսումնասիրությունից պարզ չէ, թե հանձնաժողովը ինչպես է հիմնավորել և պատճառաբանել, որ Կոնսորցիումը սահմանված ժամկետում չի ներկայացրել փաստաթղթերը:

Նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելը ենթադրում է, որ մասնակիցը հնարավորություն ուներ հունիսի 12-ին ներկայացնելու շտկված փաստաթղթերը: Հանձնաժողովը, նիստի կասեցումից հետո հաջորդ աշխատանքային օրը, 13.06.2019 թվականին արդեն իսկ իր տրամադրության տակ ուներ շտկված փաստաթղթերը: 12.06.2019 թվականին գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին ուղարկվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, այս պարագայում ո՞ր փաստական իրավիճակից ելնելով է հանձնաժողովը որոշել, որ Կոնսորցիումը սահմանված ժամկետում չի ներկայացրել:

Փաստաթղթերի շտկված տարբերակը 12 հունիսի 2019թ. ուղարկվել է «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային հասցեին, ասվածի ի հավաստում բողոքին կից ներկայացվել է «5635368@gmail.com» էլեկտրոնային փոստից տպված էջը՝ որն ապացուցում է վկայակոչած փաստը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն ժամկետների տրամադրումը

աշխատանքային օրերով սահմանելով չենք կարող հասկանալ աշխատանքային ժամը, պետք է հասկանալ այն օրերը, որոնք չեն համընկնում տոն կամ հիշատակի կամ հանգստյան օրերի հետ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը համատեղ գործունեության պայմանագրով հանդես է գալիս օտարերկրյա կազմակերպության՝ «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ, որը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում և պահանջվող շտկված փաստաթղթերը պետք է տրամադրեր «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունը:

Հայտնի իրողություն է, որ 12.06.2019 թվականը ՌԴ-ում ոչ աշխատանքային օր է եղել՝ Ռուսաստանի անկախության հռչակման կապակցությամբ, թեև «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունը շտկված փաստաթղթերը տրամադրել է 12.06.2019թ, սակայն, եթե նույնիսկ դրանք ներկայացվեին 13.06.2019թ., ապա գնահատող հանձնաժողովը պետք է գնահատեր, որ դրանք ներկայացվել են սահմանված ժամկետում՝ ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով սահմանված պահանջից և չէր կարող խտրական մոտեցում դրսևորեր, այլապես կխախտվեր հավասարության իրավունքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը և «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

Գնահատող հանձնաժողովը թիվ 10 արձանագրությամբ վկայակոչելով 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մասնակիցներին տրամադրել է մեկ աշխատանքային օր՝ շտկված փաստաթղթերը ներկայացնելու համար:

04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա,

իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 47-րդ կետը սահմանում է 3 աշխատանքային օր տրամադրել մասնակցին անհամապատասխանությունները շտկելու համար, մինչդեռ՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտելով սահմանված կարգը մասնակիցներին տրամադրել են մեկ աշխատանքային օր:

Թիվ 10 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը 2-րդ կետով որոշել է՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը՝ ժամը 11:00-ին:

11.06.2019 թվականի ժամը 11:00-ին կայացած նիստըով հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել, որպեսզի մասնակիցները 12.06.2019 թվականին ներկայացնեն փաստաթղթերի շտկված տարբերակները: Համաձայն նույն որոշման 2-րդ կետի՝ կասեցումից հետո ներկայացված շտկման քննարկման նիստը պետք է վերսկսվեր հաջորդ օրը՝ 13.06.2019թ. ժամը՝ 11:00-ին, մինչդեռ՝ գնահատող հանձնաժողովը խախտել է իր իսկ որոշումը և նիստը տեղի է ունեցել 14 հունիսի 2019թ. ժամը 14:00-ին:

Վերորգրյալ փաստերի վերլուծության և օրենսդրական կարգավորումների կիրառման մեկնաբանության արդյունքում Ընկերությունը փաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) ներկայացրած փաստաթղթերի գնահատումն իրականացրել է գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությամբ ամրագրված նորմերի խախտմամբ:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 11 արձանագրության 1.3 կետով «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) հայտը մերժելու մասին 14.06.2019թ. որոշումը.

2. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 11 արձանագրության 1.4 կետով «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին 14.06.2019թ. որոշումը.

3. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 11 արձանագրության 1.5 կետով «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) հայտի մերժման արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

4. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 11 արձանագրության 1.6 կետով «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասին 14.06.2019թ. որոշումը.

5. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.07.2019թ. թիվ ՊՆ/02/1072-2019 գրությամբ ներկայացրել է բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են սահմանված մեկ օրյա ժամկետի խախտմամբ, ուստի Կոնսորցիումի հայտը մերժվել է:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎիԷյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «ՎիԷյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2019թ. նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ առկա համապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Նույն արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 02.07.2019թ. թիվ ՊՆ/02/1072-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի,

ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՎիԷյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «ՎիԷյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ

զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2019թ. նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 11.06.2019թ. առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված արձանագրված անհամապատասխանությունը՝ շտկված փաստաթղթերն ուղարկելով գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ առկա անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվել է սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Նույն արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է:

Պատվիրատուի կողմից տրամադրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.maghaqyan@mil.am» էլ. փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի «5635368@gmail.com» էլեկտրոնային փոստից «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային փոստին փաստաթղթերի շտկված տարբերակն ուղարկվել է **13.06.2019թ. ժամը 12:33-ին:**

Իր հերթին «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է Ընկերության «5635368@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի՝

փաստաթղթերի շտկված տարբերակն «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային փոստին ուղարկվել է **12.06.2019թ. ժամը 23:32-ին:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության ժամանակ առաջացած հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերը պարզաբանելու և Ընկերության կողմից ներկայացված ապացույցի հավաստիությունը ստուգելու նպատակով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, 22.07.2019թ. նշանակել է փորձաքննություն:

Փորձաքննության արդյունքում 24.07.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ Ընկերության էլ. փոստի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՎիԷյչ Գրուպ» ՍՊԸ-ի «5635368@gmail.com» էլեկտրոնային փոստից «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային փոստին փաստաթղթերի շտկված տարբերակն ուղարկվել է **12.06.2019թ. ժամը 23:32-ին:**

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված շտկված փաստաթղթերում ներառված «ՕլիմպՍիթիՍտրոյ» ընկերության համապատասխան գրության վրա առկա Վահրամ Հայրիյանի էլեկտրոնային ստորագրության դնելու ամսաթվին և ժամին՝ այն է **«13.06.2019թ. ժամը 00:18:43»,** ապա այս հարցի կապակցությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կատարված համապատասխան հարցմանն ի պատասխան՝ էլեկտրոնային կառավարման նախագծերի համակարգող կազմակերպությունը՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն համապատասխան գրությամբ հայտնել է, որ վերոհիշյալ փաստաթղթի ստորագրման ամսաթիվն ու ժամը (համաձայն ստորագրողի համակարգչի) **12.06.2019թ. ժամը 23:18-ն է**: Այն հանգամանքը, որ ստորագրության գրաֆիկական արտապատկերման մեջ նշված է «հունիսի 13, 00:18» բացատրվում է ստորագրող ծրագրում նշված Հայաստանի հին ժամային գոտիով՝ AMTS-Armenian Summer Time, իսկ Հայաստանը այլևս չի կիրառում ամառ-ձմեռ ժամային շեղումներ, ուստի գրաֆիկական պատկերը պետք է անտեսվի, իսկ ստորագրման ամսաթիվը դիտվի որպես 12.06.2019թ. ժամը 23:18:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Կոնսորցիումը Կարգի 47-րդ կետով նախատեսված մեկ աշխատանքային օրյա ժամկետում ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակը, ուստի գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով կոնսորցիումի տվյալները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը դադարեցնելու մասին պահանջին, ապա այն ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում արդեն իսկ նախաձեռնվել է «ՎիԷյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի քննության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կկայացվի իրավապարտադիր որոշում:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված՝ Կոնսորցիումի հայտը հրավերի պահանջներին բավարարող գնահատելու մասին պահանջին, հայտնում եմ, որ այն նույնպես ենթակա է մերժման, քանի որ Կարգի 48-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին: Հետևաբար Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար կամ անբավարար գնահատելու հարցը կարող է որոշվել միայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կոնսորցիումի ներկայացրած շտկված փաստաթղթերի ուսումնասիրության և գնահատման արդյունքում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է մասնակի բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝
   - «Վիէյչ Գրուպ» և «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունների հայտը մերժելու մասին որոշումը.
   - Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և վերջինիս՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր պահանջելու մասին որոշումը.
2. Բողոքը պահանջի 2-րդ և 5-րդ կետերի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**